ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՔԱՐՈԶ
(Խոսված Վիեննայի Ս. Հռիփսիմե եկեղեցում)

Սիրելի հավատացյալներ, վերադարձած ըլլալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինեն, և մեր Սուրբ Հայրենիքեն, այս անգամ որպես նորօծ եպիսկոպոս, կուզեի ձեզի հաղորդել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Սուրբ Օծություն Վազգեն Սրբազնագույն կաթողիկոսի ողջույնները և օրհնությունները ձեզի բոլորիդ, ձեր առողջության, ձեր ընտանեկան բարեկեցության, ձեր հաջողության համար:

Եթե երկար ատեն ես տատամսեցա, պատճառը այն էր, որ ինքզինքս այնքան ալ արժանի չէի նկատեր եպիսկոպոսական բարձր պատասխանատվության և պաշտոնին: Եվ սակայն, կգիտակցեմ, որ ամեն մարդ, նաև եկեղեցվո մեջ, ազգին մեջ աշխարհական թե հոգևորական, որոշ պարտականություն մը ունի կատարելիք: Եվ ատիկա ընդարձակելով կարելի է ըսել, որ ամեն մարդ իր դերը կկատարե այս աշխարհին մեջ, այս կարճ կյանքի ընթացքին, և կանցնի կերթա՝ որոշ հետք մը թողնելով պատմության մեջ: Հետևաբար, կրնանք նաև եզրակացնել, որ ամեն մարդ, մանավանդ կոչեցյալն, տեսակ մը մեր ժողովուրդին ճակատագրին և մեր Եկեղեցվո ճակատագրին ձեռքին մեջ գործակատար մըն է: Մենք կկատարենք այն, ինչ որ մեր ժողովուրդը, մեր պատմությունը և մեր ճակատագիրը մեզի կթելադրե և կամ կպարտադրե:

Եպիսկոպոսական ձեռնադրությամբ հոգևորական մը Եկեղեցվո բարձրագույն իշխանության մասնակից կդառնա: Եկեղեցին իր բարեկարգության համար, իր կենսունակության, իր գոյատևման համար բնականորեն միշտ նոր որոշումներ կառնե, և պիտի առնե, և այդ որոշումները բնականորեն ավելի եպիսկոպոսական դասն է, որ կու տա: Եվ հետևաբար, Վեհափառ Հայրապետին այդ շնորհը կբանա ինձի այն դուռը, որպեսզի ես ալ մասնակից դառնամ բարձր մակարդակի վրա մեր Եկեղեցվո ղեկավարության մեջ, մեր ժողովուրդի ղեկավարության մեջ: Ասիկա, ըսենք, բարձրագույն մակարդակն է, մոռնալով պահ մը նաև, որ որպես եպիսկոպոս, իրավունք ունիմ հետ այսորիկ, անհրաժեշտության պարագային սարկավագ, քահանա և կամ վարդապետ ձեռնադրելու:

Բայց եպիսկոպոսական ձեռնադրությունը երբեք չի հակասեր, այլ ընդհակառակը՝ կամրապնդե հոգևորականին քահանայական հանգամանքը, անոր հոգևորական կոչումը: Ինչ ալ ըլլան աստիճանները, բոլոր հոգևորականներ մանավանդ են և կմնան որպես քահանաներ: Քահանային պարտականությունն է ժողովուրդին հոգևոր-կրո-

նական պահանջներուն ըստ կարելիոյն գոհացում տալ: Քահանային պարտականությունն է, ինչպես Եսայի մարգարեին խոսքին մեջ կհայտնվի, ավետարանել, քարոզել, բժշկել, այսինքն՝ մխիթարել: Եվ եպիսկոպոսական ձեռնադրության ժամանակ, 21 սեպտեմբերին, հաճախ Եսայի մարգարեին այս խոսքը ընթերցվեցավ, ուր կըսվի. «Հոգի Տեառն ի վերայ իմ վասն որոյ եւ օծ իսկ զիս»: Տիրոջ Հոգին իմ վրա է, և Ան է, որ զիս օծեց, որպեսզի ավետարանեմ, որպեսզի մխիթարեմ, որպեսզի քարոզեմ: Եվ ես Սուրբ Էջմիածինին տաճարին մեջ զգացի այդ ոգին, որ Ամենայն Հայոց Հայրապետի միջնորդությամբ կբաշխվեր մեր վրա: Այդ ոգին ոչ միայն Աստվածային ոգին էր, որ կբաշխվեր մեզի, այլ նաև այդ ոգին մեր ժողովուրդի ոգին էր, մեր ժողովուրդի պատմությունն էր, մեր ժողովուրդի ամենանուրբ հոգեկան զգացումներն էին, որ անգամ մը ևս կբաշխվեին, կտրվեին, ներկա և առկա կդառնային այդ օր, այդ պահուն մեր մտածումներուն և մեր ապրումներուն մեջ:

Ավետարանել, քարոզել, մխիթարել. ո՞վ կրնա ըսել, սիրելիներ, որ այսօր պետք չունի ինքը սիրո քարոզության, ո՞վ կրնա այսօր ըսել, որ ինքը պետք չունի լույսի Ավետարանին, ո՞վ կրնա այսօր ըսել, որ ինքը պետք չունի համերաշխության և խաղաղության կոչին և Ավետարանին: Ամեն հոգևորական Հայ Եկեղեցվո մեջ կամ դուրս ունի այդ պարտականությունը՝ քարոզելու սերը, քարոզելու հույսը, քարոզելու համերաշխությունը, քարոզելու խաղաղությունը: Նամանավանդ խաղաղությունը՝ որ մեր ժողովուրդին համար, ինչպես անցյալին՝ նաև այսօր, կենսական պահանջ մը կդառնա, Բանաստեղծին խոսքը, թե «հացի, օդի, ջուրի նման մենք պետք ունինք հպարտության», նույնքան և ավելի՝ հացի, օդի և ջուրի նման, մեր ժողովուրդը, ինչպես Ամենայն Հայոց Հայրապետը միշտ կշեշտե, պետք ունի խաղաղության: Այդ խաղաղությունն է, որ մեր փոքր, այլ հզոր երկրին՝ Հայրենիքին պիտի բերե ապահովություն: Եվ այդ ապահովության մեջ է, որ մեր ժողովուրդը պիտի կարենա ինքզինք զարգացնել, իր սահմանները ապահովել և. իր պատմական դերը և առաքելությունը կատարել:

Հայ հոգևորականի պաշտոնը, սիրելիներ, միայն քարոզությամբ Ավետարանին չէ, որ կլրանա: Միայն խորհրդակատարությամբ, միայն ծիսակատարությամբ չէ, որ կավարտի: Այլ գուցե ուրիշ ժողովուրդներե ավելի հայ հոգևորականին պարտականության վրա կավելնա մշակույթինը, մեր ժողովուրդին պատմական և ներկա մշակույթին եկեղեցիին միջոցավ կամ ընդհանրապես նպաստելու, որպեսզի այդ մշակույթը զարգանա, ընդարձակվի, պահպանվի, ծավալի և մեր ժողովուրդին բաշխվի:

Այս առիթով հանդիսավոր, կուզեի երկու թյուրիմացություններ կամ չափազանցություններ հանձնել ձեր ուշադրության: Մշակույթի կապակցությամբ երկու հակոտնյա, երկու չափազանցյալ կարծիքներ երբեմն կհայտնվին: Մին այն է, որ մենք հրաշալի մշակույթ ունինք, և այս մշակույթին միջոցավ կրնանք մենք ապրիլ և վերապրիլ: Երկրորդ կարծիքը, որ երբեմն կլսեք՝ թե հակառակ անոր, որ մենք մշակույթ ունինք, այնքան ալ չենք կրնար եվրոպական կամ ամերիկյան մշակույթին հետ մրցիլ, և այդ իսկ է պատճառը, որ մեր ժողովուրդը ուշ կամ կանուխ, պիտի ձուլվի տեղական ժողովուրդին մեջ, որովհետև իր մշակույթը այդ զորությունը չունի:

Ես կուզեի այդ երկու տեսակետներն ալ չափավորել, սիրելիներ, և եզրակացնել առաջին առիթով, որ այո՛, հազարամյակներ փաստող մշակույթ մը ունինք, բայց ատիկա գանձ կամ գանձարան մըն է: Այդ մշակույթը իր օգուտը կամ բարիքը չի բերեր: Գանձ մըն է ան կամ գանձարան մը, տաճար մըն է, ինչպես մեր Եկեղեցին, որ կա, և սակայն մեր հարաբերությունը այդ մշակույթին հետ, ան է, որ կորոշե մեր ճակատագիրը: Չի բավեր ունենալ գանձ մը, անիկա պահել: Որևէ օգուտ չի բերեր մեզի այդ գանձը առնել և ինչպես Ավետարանի պատմության մեջ կըսվի՝ «տարավ պահեց հողին տակը, որպեսզի որևէ վտանգ չպատահի»: Ունինք այդ մշակույթը արտասահմանի մեջ նաև՝ մեր պատմական և զարգացող մշակույթը, Եվրոպայի և Ամերիկայի մեջ և այլուր: Բայց ինչ որ երբեմն պարզագույն ձևով չենք անդրադառնար, մեր կապակցությունը մեր մշակույթին հետ որքան զորացնենք, այնքան կզորանա հայապահպանությունը: Բայց եթե մեկ կողմ մեր մշակույթը կա և մեկ կողմ՝ մեր անտարբերությունը, բնական է, որ չենք կըրնար սպասել, որպեսզի այդ մշակույթը իր բարիքները բերե և բաշխե մեզի: Հետևաբար, նաև երկրորդ կերպով մը ջրված, հերքված կըլլա այն տեսակետը, որ մեր մշակույթը տկար է, չի տոկար ուրիշ՝ եվրոպական, ամերիկյան մշակույթին: Ընդհակառակը, ես պիտի ըսեի՝ երբեմն ավելի ճոխություններ, ավելի հնություն և գեղեցկություն կբացահայտե հայ մշակույթը: Բայց կմնա, որ մենք մեր հարաբերությունը, մեր կապակցությունը ամրացնենք, զորացնենք անոր հետ:

...Այս առիթով կուզեի նաև հետևյալ խորհրդածությունը ձեր ուշադրությանը հանձնել, երբ Մայր Աթոռի մեջ կգտնվիք, երբ որ Արարատի դիմաց կգտնվիք և այնտեղեն կնայիք հայրենի հարցերուն վրա, այնտեղեն կնայիք արտասահմանի հարցերուն վրա, բոլորովին տարբեր կտեսնեք այն, ինչ որ, ըսենք, բաժակ մը ջուրի մեջ մենք զմեզ կտեսնենք և կամ մեր հայրենիքը: Երբ որ Արարատի քովը կանգնած կնայինք Արտասահմանին, ավելի կզգանք մեր ողբերգությունները, ավելի կզգանք անհրաժեշտությունը հայապահպանման ջանքերու կեդրոնացման, հայապահպանման ջանքերու համադրության: Նաև, հայրենի հողին վրա հայրենի իրականությունը ավելի լավ կտեսնենք, քան թե արտասահմանի մեջ մեր աչքերը փակած կամ կիսով միայն բաց: Այնտեղ կտեսնենք ավելի հստակորեն և ավելի տարբեր, քան ինչ որ մենք այստեղ կխորհինք: Եվ եթե այդ բոլորը կարենանք բաց աչքով, հստակորեն տեսնել, մենք շատ ավելի միացած պիտի ըլլանք ոչ միայն այս գաղութին մեջ, այլ նաև բոլոր գաղութներուն մեջ, որովհետև հրատապ են այն հարցերը, որոնք մեզ բոլորս կայրեն: Այդ արթնությունը, այդ մտքի արթնությունը և հոգիի արթնությունն է, որ բոլորիդ կմաղթեմ ձեր մտածումներուն մեջ, ձեր աղաթքներուն մեջ և ձեր այցելություններուն մեջ, երբ որ Հայրենիք երթաք, որպեսզի իբր բոլորովին նոր անձ կարենաք ձեր զգացումներով և մտածումներով վերադառնալ...: